

ՊԱՏՄԱԿԱՆ

Բիւզանդական Կայսրներից մեկը Լօնդոնում եւ Փարիզում,*— Անցեալ տարուայ Revue de deux Mondes-ի վերջին գրքում, Բիւզանդական պատմութեան գիտակ յայտնի պատմաբան Գիւստաւ Շլօմբերգէն մի շատ մանրակրկիտ ուսումնասիրութիւն է զետեղել՝ 1399 թուին Բիւզանդական Բազիլիկոս էմմանուէլի դէպի Փարիզ և Լօնդոն յանձն առած ճանապարհորդութեան մասին: Բիւզանդական կայսրութիւնն այդ ժամանակ ճգնաժամի ընկած էր անցնում,—Փոքր Ասիան և, համարեա, ամբողջ Բալկանեան թերակղզին գրաւուած էր թիւրքերի կողմից և մի ժամանակ ահագին կայսրութիւն կազմող պետութիւնը կենդրոնացած էր միայն Կ. Պօլսի պարիսպների մէջ: Անկախ էր մնացել դեռ ևս Բալկանեան թերակղզու հարաւային մասը, Մօրէան, որ կառավարում էր Բազիլիսի եղբայր Թէոդորոսը:

Ինքն էմմանուէլը մատաղ հասակում պատանդ էր վերցրուած թիւրքերի կողմից և տարուած Բրուսա, որտեղ և ապրում էր սուլթան Բայազիտի հրամանով: Երբ նորա հայր Յովհաննէս Ե. կայսրը մեռաւ՝ էմմանուէլը փախաւ Փոքր-Ասիայից և, ամեն արգելքներ և վտանգներ յաղթելով, հասաւ իւր դժբաղդ մայրաքաղաքը: Բիւզանդացիք տեսնելով, որ վերջ ի վերջոյ թիւրքերի ձեռքով պէտք է կործանուին, խնդրում և աղերսում էին Արևմտեան Եւրոպային օգնել իրենց և անօրէնների յաջողութիւնների առաջնառնել: Որպէսզի այդ օգնութիւնն ստանային, Յոյները վճռեցին նոյն իսկ իրենց կրօնականի ու դաւանանքի մաքրութեան զոհաբերութեան քայլն անել և ընդունել իրենց վերայ Պապի հոգևոր գերիշխանութիւնը: Դեռ ևս 1369 թուին Յովհաննէս Ե. Միրանաձին կայսրը գնաց Հռոմ, ուր և ընդունեց միութիւնը: Կայսրը Ս. Պետրոսի տաճարում կարդաց հռոմէական Եկեղեցու Հաւատոյ հանգանակը և ընդունեց Յունական Եկեղեցու վերայ Ուրբանոս Ե. պապի գերիշխանութիւնն ու գլխաւորութիւնը: Սակայն այդ կայսեր Կ. Պօլիս վերադարձը շատ ուրախ չանցաւ: Վենետիկում կայսեր պարտատէրերն անողոք կերպով պահանջում էին կատարած պարտքերի հատուցումը, իսկ որովհետև հատուցանելու ոչ մի հնար և միջոց չկար, ուստի և թշուառ կայսրին արգելքի տակ դրին: Միմիայն շնորհիւ իւր որդի էմմանուէլի, որ Վենետիկ

*) Историческ. Вѣстникъ, 1916, փետր.

հասաւ աշտտեղից-աշտտեղից հաւաքած մի քիչ դրամով, Յովհաննէս
Ե. կայսրին աղատեցին և իրաւունք տուին Կ. Պօլիս վերադառնալ:

Յոյների աղերսը վերջապէս լսեց Եւրոպան, և 1396 թուին
Թիւրքերի դէմ արշաւանքի ելաւ ասպետների զօրաբանակը, Կոմս
Նեվերի և Հունգարական Թագաւոր Սիգիզմունդի գլխաւորութեամբ
և հրամանատարութեամբ: Սակայն այդ արշաւանքը շատ տխուր
վախճան ունեցաւ: Նիկոպօլիսի մօտերը հանդիպելով մեծաքանակ
Թիւրքական ոյժերի, ասպետները սաստիկ ջարդ կրեցին, և մե-
ծամասնութիւնն սպանուեցաւ կամ գերի ընկաւ:

Յոյների դրութիւնն աւելի ևս վտանգաւոր դարձաւ և մի-
միայն Ֆրանսիական նշանաւոր մարշալ Բուսիկօյի՝ 1200 աղեղ-
նաւորների և տասնևեօթ սպառազէն նաւերի հետ օգնութեան
հասնելը, գործը մի քիչ ուղղեց: Թիւրքերը, որ համարեա տէր էին
դարձած Գալատիայի թաղին, մի քանի օրից յետոյ դուրս վազն-
դուեցան Կ. Պօլսի շրջակայքից և քիչ յետոյ էլ Ասիական ափը
վանուեցան: Բուսիկօն խորհուրդ տուեց էմմանուէլին անձամբ
գնալ Ֆրանսիական Թագաւորի մօտ և օգնութիւն հայցել: Կայսրը
հաւանութիւն տուեց այդ խորհրդին և նոյն իսկ կամենում էր
հրաժարուել Բիւզանդական գահից յօգուտ Ֆրանսիական Կարլոս
Զ. Թագաւորի, որի մօտ պիտի գնար:

1399 թուի դեկտեմբերին Բագիլոսը իւր երկար ճանապարհ-
հորդութեանն ելաւ: Իւր նախորդներից երկուսը միայն եղել էին
Արևմտեան Եւրոպայում, բայց նոցա ճանապարհորդութիւնն էլ
Խալիֆայից այն կողմը չէր անցել: Էմմանուէլը պէտք է այցելէր
Փարիզը և նոյն իսկ Լօնդոն գնար, որոնց մասին Յոյները շատ աղօտ
գաղափար ունէին: Օտար և հեռաւոր աշխարհ ճանապարհ ընկ-
նելուց առաջ էմմանուէլը Կ. Պօլսից հանել տուեց իւր ընտանիքը
և ուղարկեց համեմատաբար աւելի ապահով Մօրէան: Կառավա-
րիչ Թէոփորոսի մօտ: Իսկ Կ. Պօլսում, իբրև կայսերական տեղա-
պահ, թողեց իւր եղբօր-որդի Անդրոնիկոսին, որ և յետոյ կայսր
դարձաւ Յովհաննէս Է. Ծիրանածին անունով և պատմութեան
մէջ շատ վատ համբաւ թողեց իւր մասին: Պելոպոնէսից կայսե-
րական նաւն ուղղուեց սովորական ծովային ճանապարհով, այ-
սինքն դէպի Վենետիկ: Հաւանօրէն այդ երկար ճանապարհորդու-
թեան ժամանակ պէտք է Դալմացիայի ափերին, այս ու այն
վայրում, կանգ առած լինին, սակայն այդ մասին պատմական
տեղեկութիւններ չկան:

Վենետիկում կայսրին շատ ճշիւ ընդունելութիւն ցոյց տուին:
Վենետիկցիք, կարծես, կամենում էին մոռացնել տալ անցեալի
վատ յիշողութիւնները, որ ստացել էր էմմանուէլը իւր հօր փըր-
կանքը տանելու առաջին ճանապարհորդութեան ժամանակ: Ինքը՝

Վենետիկի դօժը, ծերակոյտի ամբողջ կազմի ուղեկցութեամբ, ընդառաջեց Բազիլոսին բերող նշանաւոր «Բուցինտաւր» նաւին: Էմմանուէլին տեղաւորեցին մարքիզ Ֆերրարէի հոյակապ պալատում: Ի պատիւ նորա տրուեցան մի շարք հանդէսներ և խնճոյքներ, որ մի քանի հարիւր ոսկէ դուկատ էր նստել, — մի գումար, որ այն ժամանակները չափազանց մեծաքանակ էր:

Որքան ժամանակ մնաց Բազիլիսը Վենետիկում՝ ճիշդ յայտնի չէ: Այդ տեղից նա ուղևորեց Պադուա, իսկ հաւատարիմ Բուսիկօն ուղղակի Փարիզ գնաց, որպէս զի Էմմանուէլին արժանի ընդունելութիւն պատրաստել տայ: Պադուայում նորան դիմաւորեցին քաղաքի տէր և իշխան Ֆրանցիսկոս Կարրարէի որդիները: Նոցա ուղեկցում էր բազմաթիւ և ճոխ շքադիր մի խումբ, որ յետոյ միացաւ Բազիլիսի շքախմբին: Քաղաք մտան մօտաւորապէս առաւօտեան ժամը մէկին: Զնայելով այդ ուշ գիշերային ժամին, ամբողջ Պադուան ոտքի վերայ էր: Ամբողջ դիմաւորում էր Էմմանուէլին ցնծութեան և ողջոյնի աղաղակներով: Ամբողջ գիշերն անընդհատ շարունակւում էր այդ ուրախութիւնն ու հանդէսը:

Պադուայից յետոյ անցան Միլան: Բայց որովհետև այդ քաղաքի տէրն ու իշխանը, Զովանի Վիսկօնտին, այդ ժամանակ գտնւում էր Պաւիայում, ուստի և Էմմանուէլն ուղղակի դիմեց Պաւիա: Այդտեղ նորա ընդունելութիւնը իւր ճոխութեամբ գերադանցեց Պադուայի ընդունելութեան: Որպէս զի Յունական կայսրին ընդունեն ամենայն պատշաճաւորութեամբ, ժողովուել էին շրջակայքի բոլոր իշխանները՝ իրենց զգեստների արտակարգ ճոխութեամբ իրար հետ մրցակցութեան ելնելով:

Ընդունուած սովորութեան համաձայն՝ Պաւիայումն էլ մի շարք հանդէսներ կատարուեցան ի պատիւ յունական կայսեր, որոնց մասին, սակայն, մանրամասն տեղեկութիւններ չկան:

Պաւիայից Էմմանուէլն ուղղակի անցաւ Ֆրանսիական հողը: Կարլոս 2 թագաւորը, որ տանջւում էր հոգեկան հիւանդութեամբ, այդ ժամանակ հիւանդութեան «լուստւոր շրջանի» մէջ էր գլտնւում, ուստի և կարողացաւ մինչև այդ ժամանակ Ֆրանսիայում չտեսնուած հիւրին պատշաճ հանդիսաւորութեամբ և շքով ընդունել: Պետութեան սահմանագծի կողմերն ուղարկեց բազմաթիւ ասպետներ և պալատական աստիճանաւորներ, որոնք կայսեր անցնելու ճանապարհի երկու կողմը շարէ շար կանգնած էին:

Ժամանակակից տարեգիրներից մէկը, որ ըստ երևոյթին Ա. Դիոնիսիոսի ուխտի միաբանութեան անդամներից մէկն էր, թողել է յետնորդներիս Էմմանուէլ կայսրի Ֆրանսիական մայրաքաղաքը մտնելու և Փարիզում մնալու մանրամասն նկարագրութիւնը:

Մըլէնի վրայով առաջանալով, 1400 թ. յունիս 3-ին, առա-

ւօտեան 9 ժամին, Բաղիլիսը հասաւ Շարանտօն, որը մի փոքրիկ քաղաք է Փարիզից մի քանի վերստ հեռաւորութեան վերայ, Մարն և Սէնա գետերի միացման վայրում: Այդտեղ նորան դիմաւորեց Փարիզի քաղաքացիներ շքեղ հանդիսախումբը: Փարիզի ամբողջ ազգարնակութիւնը փողոցներն էր ելել: Քաղաքի զոների մօտ Յոյներին դիմաւորեցին արքայական վարչապետը և Փարիզի խորհրդարանի նախագահը, որին ուղեկցում էր հինգ հարիւրից քաղկացած մի շքախումբ: Նոցա հետևում էին եկեղեցու ծիրանաւորները (կարդինալ) իրենց կարմրագոյն զգեստներով, Փարիզի հոգևորական դասը և վերջապէս թագաւորը շուշանազարդ ծիրանիով, շրջապատուած դրանիկներով և պետական բարձր պաշտօնէութեամբ:

Կայսեր արտաքինը շատ մեծ տպաւորութիւն թողեց Փարիզցիներին վերայ: Էմմանուէլը Բիւզանդական լաւագոյն կայսր-ներից մէկն էր: Մեծ զարգացման տէր, գրականագէտ և գիտնական, դորա հետ և շատ գեղեցիկ արտաքին և նուրբ դիմագծեր ունեցող: Գլուխը ժամանակից շատ առաջ սպիտակել էր ձեան պէս և նորա երկար, փառահեղ, սպիտակին տուող՝ կրծքին փռուած մորուսը նորան շատ վեհ և պատկառելի կերպարանք էր տալիս:

Երիտասարդ Կարլոսը իւր հիւրին ընդունելու ժամանակ զլիարկը հանեց: Նոյնն արեց և կայսրը: Երկու գահակալներն ևս, միաժամանակ, արտասանեցին իրենց ողջոյնի խօսքը.—Կարլոսը Ֆրանսերէն, իսկ Էմմանուէլը՝ Յունարէն: Միաժամանակ իջնելով ձիերից, համբուրուեցան, և կատարեալ գոհունակութեան արտայայտութիւն ցոյց տուին իրար տեսնելու համար: Ապա նորից ձի հեծած կողքէ-կողք անցան Փարիզի փողոցներով: Էմմանուէլի սպիտակ, մետաքսեայ երկայն հանդերձը և նորա երկայն սպիտակ մադերը, որ ծածանում էին ուսերի վերայ, Փարիզեցիներին առանձին ուշադրութիւնն էին գրաւում: Զնայած այն ծանր հանգամանքներին, որի մէջ էր անցել նորա կեանքը, չնայած իւր 52 տարեկան հասակին, Բաղիլիսը դեռ ևս պահպանել էր իւր ոյժն ու արագաշարժութիւնը և, երբ Սէնտ-Անտուանի քաղաքային զոների մօտ Կարլոսը հրամայեց սպիտակ նժոյգ մատուցանել կայսրին, նա արագ և թեթեւ թռաւ նորա վերայ, Փարիզցիներին քիչ զարմանք չպատճառելով իւր ճարպիկ շարժումով: Երկու կողմից զարդարուած փողոցներից անցնելով երկու գահակալն էլ հասան Սէն-Պօլ ապարանքը, որտեղ ապրում էին այդ ժամանակ Ֆրանսիական թագաւորները և ուր նոցա համար սլաւորաստուած էր մեծ ընդունելութիւն և խրախճան: Դորանից յետոյ Էմմանուէլ կայսրը գնաց Լուվրի պալատը, որտեղ նորա համար առանձին բնակարան էր յատկացրած: Ամենից աւելի այստեղ նորան զար-

մանք պատճառեցին գործընդհանուր գործերը, որպիսի գործեր Արևելքում չէր տեսած ամենեին:

Կայսեր ծախքերի և պահպանութեան համար որոշուած էին, նոյն ժամանակի համար, մեծաքանակ գումարներ՝ պետական գանձարանից: Այդ գումարների համար տուած հաշիւները նորերս երևան եկան Փարիզի Ազգային մատենադարանի ձեռագիրների մէջ:

Իւր Փարիզ մնալով էմմանուէլը, ի միջի այլոց, օգտուեցաւ ամենից աւելի յայտնի եկեղեցիներն ու վանքերն այցելելով, բայց պատարագ միշտ լսում էր իւր յունական շարժական եկեղեցու մէջ: Յունական ժամակարգութեան գեղեցիկ ծիսակատարութիւնը զարմացնում է Փարիզեցիներին, և 1400 թ. կիրթ հասարակութեան պատկանելու և բարեբարոյ վարմունքի նշան էր համարւում այդ աստուածաշտութեանը գոնէ մի անգամ ներկայ լինելը:

Մինչ այդ խեղճ Կարլոսը կրկին իւր հիւանդագին վիճակին ենթարկուեցաւ, որի ժամանակ, ի հարկէ, ոչ մի բանակցութիւն չէր կարելի անել նորա հետ, որ Ֆրանսիան օգնութիւն հասցնէ Բիւզանդացիներին թիւրքերի դէմ: Էմմանուէլը վճռեց օգտուել այդ ազատ ժամանակամիջոցից և դիմել նոյն խնդրով նաև Անգղիական թագաւորին: 1400 թ. սեպտեմբերին նա անցաւ Լամանշը, որի ժամանակ մեծ նեղութիւն կրեց, որովհետև ծովը խիստ ալեկոծուած էր:

Էմմանուէլը ամի ելաւ Դուվրում: Այդտեղ անցրած ժամանակի մասին ոչինչ յայտնի չէ: Լօնդոն գնալու ճանապարհին այցելեց Քէնթըրբրիի նշանաւոր տաճարը, որտեղ Օգոստինեան կրօնաւորները նորան շատ սիրալիւր ընդունելութիւն ցոյց տուին: Լօնդոնում նորան ընդունեց Լանքաստրի Հենրիկոս Զ. թագաւորը: ԺՁ դարու Անգղիական պատմիչ Թոմաս Ուօլսինհէյմը պատմում է, որ Հենրիկոսն իւր շքախմբով ընդառաջեց նորան մինչև Բլակնիս կոչուած վայրը, Լօնդոնում յատկացրեց նորա համար շքեղ բնակարան և նշանակեց կայսրի և իւր շքախմբի պահպանութեան համար բաւարար գումար: Կ. Պօլսի ազնուականութեան ներկայացուցիչներից մէկին գրած իւր նամակում էմմանուէլը մեծ ոգևորութեամբ է խօսում Անգղիական թագաւորի և Անգղիայի մասին, որի նկատմամբ ժամանակակից Բիւզանդացիք շատ աղօտ գաղափար ունէին: «Թագաւորը համաձայն է օգնութեան հասնել մեզ մարդով, զրամով և նաւերով, որոնք և կրերեն զօրք, երբ կարևոր կլինի այդ», — վերջացնում է իւր նամակը Բադիլիսը:

Սակայն Հենրիկոս Լանկաստրացու խոստումները խոստումներ էլ մնացին: Յունական գործերին միջամուխ լինելու համար յարմար ժամանակ չէր Անգղիայում: Հենրիկոսը գահ բարձրացաւ

բռնի միջոցներով, — Կարլոս 2-ի փեսայ՝ երիտասարդ Ռիչարդ Բ-ին գահընկէց անելով և 1400 թ. սպանել տալով նորան: Արիւնոտ թագը հազիւ էր մնում Հենրիկոսի գլխին, — Անգղիայում ամէն տեղ ապստամբութիւններ էին ծագում մէկը միւսից յետոյ, ազնուականների գլխատուփները յաջորդում էին իրար: Հենրիկոսը հազիւ էր կարողանում իւր երկրի ներքին կարգը պահպանել:

Էմմանուէլը երկար չմնաց Անգղիայում. հիւրընկալութիւնը հազիւ մի ամիս տևեց: 1401 թ. փետրուարին կրկին Ֆրանսիա դարձաւ: Հիւանդութիւնից ապաքինուած Կարլոս 2-ը գիտենալով իւր հիւրի սէրն ու հակումը դէպի ամէն տեսակ կրօնական հանդէսներ, հրաւիրեց ներկայ լինել փետր. 25-ին Սէն-Դընիի վանքի տարեկան տօնին: Նոցանից իւրաքանչիւրը կամենում էր առաջ ինքը հասած լինի վանքը, որպէսզի դիմաւորէ միւսին: Բայց այնպէս պատահեց, որ ճանապարհին հանդիպեցին իրար և միասին մտան վանքը:

Յունական կայսեր հետ միասին վանք գալու պարագան մեծ դժգոհութիւն յարուցեց Ֆրանսիական կաթողիկ շրջանում, որ խիստ մոլեռանդ էր տրամադրուած: Խօսում էին, որ հարկ չկար եկեղեցական պաշտամունք կատարել հետեալի ներկայութեամբ, որպիսին համարւում էր յունական Բաղիլիսը: Ուրիշներն, ընդհակառակը, պնդում էին, թէ թագաւորը մի դեղեցիկ գործ կատարեց յունական կայսրին թողնելով ներկայ գտնուելու վանքի հանդիսաւոր պաշտամունքին, որովհետեւ դա մի նախապատրաստական դաս է նորան կաթողիկ եկեղեցու ծոցը վերադարձնելու նկատմամբ:

Էմմանուէլն ինքն էլ անմասն չմնաց այդ կրօնական վէճերին: Փարիզի գիտնական աստուածաբաններից մէկը նորան իւր մի շարադրութիւնը ներկայացրեց՝ Ս. Հոգու Հօրից և Որդուց բղխելու մասին: Կայսրը չկամեցաւ անպատասխան թողնել այդ կաթողիկ հերձուածողական ուսուցումը և, ինքն էլ իւր կողմից, մի պատասխան գրեց՝ այդ գրքի դէմ, բաղկացած 157 գլխից: Ապա կայսրը խիստ հետաքրքրութիւն էր ցոյց տալիս Ս. Կուսի անարատ յղութեան վարդապետութեան նկատմամբ, որ ծագել էր Ֆրանցիսկեանների և Դոմենիկեանների մէջ և, ինքն էլ մասնակցելով բռնկուած վէճերին, անցաւ Ֆրանցիսկեանների կողմը, որոնք պաշտպանում էին այդ վարդապետութիւնը:

Էմմանուէլը մնաց Փարիզում ընդամենը մօտ երկուս ու կէս տարի, տեղական կեանքի բոլոր նշանաւոր հանդէսներին և տօներին մասնակցելով: Այսպէս, նա ևս հրաւիրուեցաւ Բուրգօնիայի դուքսի որդի Յովհաննէսի շքեղ հարսինքին, մասնակցեց Ս. Բենեդիկտոսի Գլուխը և մասունքները Լուարի վերայ եղած մի խղճուկ և համեստ վանքից՝ Սէն-Դընիի նշանաւոր վանքը փոխադրելու հանդէսներին:

Մինչ այդ Արևելքի գործերի դրութիւնն անսպասելի կերպով այլ պատկեր ստացան և Բիւզանդական կայսրութեան համար յուսոյ և ազատութեան մի նոր ճառագայթ ծագեց այնտեղից, որտեղից աւելի քիչ յոյս կարող էին ունենալ: Բիւզանդիոնը երկաթեայ պաշարման գօտու մէջ պահպանող զարհուրելի Սուլթան-Բայազէտն ինքը խիստ մեծ ջարդ կելուա նոր ելած մի աշխարհակալի, Մօնղոլների խան Լէնկ-թէմուրից և գերի ընկաւ նորա ձեռքը: Բիւզանդիոնից լուր հասաւ, որ իբր թէ Լէնկ-թէմուրը խոստացել է կայսեր տեղապահին վերադարձնել այն ամէնը, ինչ որ Թիւրքերը խլել էին կայսրութիւնից:

Այդ լուրերի ազդեցութեան տակ էմմանուէլը վերադարձի արագ պատրաստութիւններ տեսաւ և 1402 թ. նոյեմբերին թողեց Փարիզը: Կարլոս թագաւորը ոսկու, արծաթի և թանգագին քարերի մեծամեծ ընծաներ շնորհեց և մեծաքանակ դրամի օժանդակութիւն ցոյց տուեց: Նորան պէտք է ուղեկցէին երկու հարիւր ազնուազարմ ասպետ, որոնց գլուխ էր անցած նշանաւոր Շատո-Մօրանը, որ Բուսիկոյի աջ ձեռն էր:

Յոյների վերադարձը կատարուեցաւ Ջէնովայի վերայով, ուր էմմանուէլին մեծ շուքով ընդունեցին Բուսիկօն և Ջէնովայի ազնուականները: Տասն օրից էմմանուէլը անցաւ Ֆլորէնցիա, ուր, ամենայն հաւանականութեամբ, կայսրը տեսակցեցաւ Բոնիֆացիոս Թ. պապի հետ, որի հետ անձնական մեծ համակրութեամբ էր կապուած:

Այնուհետև ճանապարհը շարունակուեցաւ կրկին Վենետիկի վերայով: Մօրէայում կայսրն այցելեց իւր եղբօրը՝ Թէոդորոսին և մտաւ Միստրա (հին Սպարտա) քաղաքը, որպէս զի ընտանիքն առնէ Կ. Պօլիս վերադառնալու համար:

Երբ Բազիլիսը իւր բազմաչարչար մայրաքաղաքը դարձաւ, լսեց, որ Սուլթան-Բայազէտն արդէն մեռել էր գերեվարութեան ժամանակ, իսկ Լէնկ-թէմուրն իւր հրոսակների հետ Սամարղանդ է դարձել: Թիւրքերի պարտութիւնը Կ. Պօլսի նուաճումը յետաձգեց, համարեա, կէս դարով, բայց կարող չեղաւ վերջնական անկումից փրկել:

Էմմանուէլ կայսրը դեռ քսան և երկու տարի ապրեց: Մահից քիչ առաջ առանձնացաւ Կ. Պօլսի վանքերից մէկը, յանձնելով կառավարութեան սանձը իւր որդի Յովհաննէսին, որ ամուսնացած էր մարքիզ Մօնֆերրատայի դստեր հետ: Մեռաւ 1425 թ. ամառը, եօթանասուն և եօթ տարեկան հասակում:

Մ Ե Լ Ի Բ.